

1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն

Հանրապետությունում 2005թ. հունվար-հոկտեմբերին, համաձայն ձկնորսությամբ և ձկնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, ձկնորսության և ձկնաբուծության ծավալը կազմել է 1003.2 մլն. դրամ, որը գիջել է 2004թ. նույն ժամանակաշրջանի մակարդակին 7.0 %-ով (համադրելի գներով):

Ձկնորսության և ձկնաբուծության ծավալները հանրապետությունում¹

	Տոննա		Հազար դրամ		2005թ. հունվար-հոկտեմբերը 2004թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, %
	2005թ. հունվար- հոկտեմբեր	2004թ. հունվար- հոկտեմբեր	2005թ. հունվար- հոկտեմբեր	2004թ. հունվար- հոկտեմբեր	
Կատարվել է որս, ընդամենը	809.0	870.0	1003160.0	1078800.0	93.0
<i>որից` իրացվել է</i>	809.0	870.0	1003160.0	1078800.0	93.0

¹ Առանց անհատ ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների (ոչ ֆորմալ) գործունեության գնահատմամբ: